Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 617 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՀԱՐԱԿԻՑ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում գտնվող Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարակից հոգևոր դաստիարակության կենտրոնի ամբողջական վերակառուցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Երկիր և մշակույթ համազգային կազմակերպություն» (10, քաղաք Հերոն, 75010, Փարիզ) Organisation Terre et Culture (10, Cité Héron, 75010 Paris):
4.	Ծրագիրը կատարողը	«Երկիր և մշակույթ համազգային կազմակերպության» հայաստանյան մասնաճյուղ (ՀՀ քաղաք Երևան, Ջավարյան փողոց, 86 տուն, ՀՎՀՀ՝ 02652056):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք՝ հոգևոր բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	35.256.340 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի օգոստոսի 24-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարակից հոգևոր դաստիարակության կենտրոնի ամբողջական վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 35.256.340 դրամ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի օգոստոսի 24-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայություն-ների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հոգևոր դաստիարակության կենտրոնի ամբողջական վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 35.256.340 դրամ, որից՝ Աշխատանքների արժեքը կազմում է 14,875,645 դրամ, Շինանյութերի արժեքը կազմում է 20,380,695 դրամ:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման հաշվետվությունը ներկայացվելու է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգով սահմանված՝ լիազոր մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

31.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ